ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԱՆՅԱՆ ՆԺԴԵՀ ԱՇՈՏԻ

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԸ. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ, ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՆՏԵՔՍՏԸ

Թ.00.06 – «Մշակութաբանություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЕРАНЯН НЖДЕ АШОТОВИЧ

АНТРОПОМОРФНЫЕ ИЗВАЯНИЯ РАВНИННОГО АРЦАХА: ТОПОГРАФИЯ, ТИПОЛОГИЯ, ФУНКЦИЯ, ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЙ КОНТЕКСТ

АВТОРЕФЕРАТ
диссертации на соискание ученой степени
кандидата исторических наук
по специальности 09.00.06 «Культурология»

ЕРЕВАН 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆ. Հ. Լ. Պետրոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., պրոֆ. Ա. Ս. Փիլիպոսյան
պ. գ. թ. Ա. Ա. Բոբոխյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 14–ին, ժ. 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 14–ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете факультета истории ЕГУ

Научный руководитель: д. и. н., проф. Петросян Г. Л.
Официальные оппоненты: д. и. н., проф. Пилипосян А. С.
к. и. н. Бобохян А. А.

Ведущая организация: кафедра археологии и этнографии факультета истории Ереванского государственного университета

Защита состоится 14 июня 2016 г. в 14:00 часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван 0025, ул. Чаренца 15).

Автореферат разослан 14 мая 2016 г.
Ученый секретарь специализированного совета
Кандидат исторических наук Мелконян У.А.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Առաջավոր Ասիայում և եվրասիական տափաստաններում քարե մարդակերպ կոթողները երևան են գալիս մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներից սկսած, դրանք առավել ակտիվ սկսում են տարածվել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբում: Վերջիններս հանդիպում են ինչպես հյուսիսարևմտյան Իրանում (Մեշքին Շահր), Միջին Ասիայում, Սիբիրում, Եվրոպայում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում և Մերձսևծովյան շրջաններում, այնպես և Հայկական լեռնաշխարհում և շրջակայքում (Կորճայք-Կորդուքում գտնվող Հաքարի), Հայաստանի Հանրապետության մի շարք հուշարձաններում (Մեծամոր, Շավարշավան, Մրգավան, Հարժիս, Լոռի Բերդ, Ջուջևան, Դվին և այլն): Ըստ ամենատարածված գիտական պատկերացման՝ մարդակերպ այս կոթողները, իրենց բազմազանությամբ հանդերձ, շատ լայնածավալ և երկարատև մշակութային ավանդույթի տարբեր դրսևորումներն են: Մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի առկա նյութերով Հայաստանը առանձնանում է որոշակի բազմազանությամբ և կարելի է ենթադրել, որ այդ բազմազանության մի դրսևորումն էլ արցախյան կոթողներն են:

<u>Ուսումնասիրության արդիականությունը:</u> Արցախի քարե մարդակերպ կոթողները երկրամասի նախաքրիստոնեական մշակույթի կարևոր բաղկացուցիչներից են: Այս տարածքը խորհրդային տարիներին հայտնի պատճառներով բավարար չափով չի ուսումնասիրվել: Եղած հետազոտություններն էլ ակնհայտորեն քաղաքականացված են: Սա վերաբերում է նաև մարդակերպ կոթողներին, որոնք որոշ ադրբեջանցի հետազոտողներ ներկայացրել են որպես աղվանական՝ փորձելով դրանց տարածվածությունը հատկապես Արցախում դիտել որպես աղվանական էթնոմշակութային սուբստրատի առկայություն: Ուստի այդ հուշարձանների հետազոտությունը, նրանց հստակ ժամանակագրության և էթնոմշակութային պատկանելության խնդիրների քննությունը ներկայացնում է ոչ միայն գիտական հետաքրքրություն, այլև հնարավորություն է տալիս մերժել ադրբեջանական զեղծարարությունները: Կոթողները թեև առանձին օրինակներով հայտնի են դարձել դեռ անցած դարի 60-ական թվականներին, սակայն նրանց պատկերագրական, իմաստաբանական քննությունը, ժամանակագրությունը և հնարավոր էթնոպատկան խնդիրները մնում էին չմանրամասնված, հաճախ էլ՝ ուղղակի չլուծված:

Արցախի ազատագրական պատերազմի արդյունքում նոր հնարավորություններ ստեղծվեցին նաև տարածաշրջանի հնագույն

պատմության և մշակույթի հետազոտության համար: Մարդակերպ կոթողների ֆիզիկական մատչելիությունն այն էական իրողությունն ու հանգամանքն էին, որոնք հնարավորություն ստեղծեցին իրականացնել դրանց մանրամասն նկարագրությունը, չափագրումը, լուսանկարումը և պատմամշակութային միջավայրի հետազոտությունը:

Ուսումնասիրության համար ֆիզիկապես հասանելի է եղել 20 կոթող, 2 այլ կոթողի մասին որոշակի մանրամասներ ստացել ենք այլ աղբյուրներից՝ Հ. Պետրոսյանի դաշտային օրագրից և որոշ լուսանկարներից: Չի բացառվում, որ ավելի մեծ՝ ֆիզիկապես մեզ ոչ հասանելի տարածական արեալում՝ Արցախի տափաստանի արևելյան մասում դրանք այսքանով չեն սահմանափակվել: Սակայն առկա հակամարտության պայմաններում անհնար է դրանց վավերացումը ոչ միայն հայ-ադրբեջանական սահմանից այն կողմ, այլև սահմանամերձ շրջաններում:

<u>Հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները:</u> Նկատի ունենալով վերոնշյալը՝ ներկա հետազոտության հիմնական նպատակն է՝

- կոթողների տեղագրական, տեխնիկական, պատկերագրական-իմաստաբանական և պատմա-համեմատական քննությամբ վերականգնել այն պատմամշակութային ընդհանրական համատեքստը, որը պայմանավորել է մշակութային այդ ֆենոմենի երևան գալն ու կենցաղավարումը պատմական Արցախ-Ուտիքում:

Այս նպատակն էլ պայմանավորել է հետազոտության հիմնական խնդիրները, որոնք կարելի է հանգեցնել հետևյալին.

ա. ճշտել նախկինում հայտնի, բայց տեղահանված կոթողների տեղադրման սկզբնական վայրը և պարզել դրանց մշակութային միջավայրը,

բ. Արցախի տափաստանային՝ ֆիզիկապես հասանելի հատվածներում հետախուզել և հայտնաբերել նոր կոթողներ,

գ. ուսումնասիրել կոթողներն ընդհանուր առաջավորասիական և եվրասիական մշակույթի համատեքստում,

դ. հնագիտական այլ սկզբնաղբյուրների ներգրավումով քննել այդ մշակույթը կրողների բնակության տարածական և ժամանակային դրսևորումները:

<u>Հետազոտության գիտական նորույթը:</u> Արցախի քարե մարդակերպ կոթողների ներկա հետազոտությունը նախաձեռնվել է 2013 թվականից և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտական արշավախմբի գիտական ծրագրի մասն է կազմել: Թեմայի շրջանակներում

վավերացվել և հետազոտվել են թվով 22 կոթողներ: Ընդ որում, դրանցից 14-ը գիտական շրջանառության մեջ են մտցվում առաջին անգամ:

Ներկա հետազոտությամբ առաջին անգամ փորձ է արվել որպես քննության մեթոդաբանական հիմք ընդունել կոթողների չեզոք նկարագրությունը, որի հիման վրա էլ նոր միայն իրականացվել է պատկերագրական վերլուծությունը: Էապես հստակեցվել է կոթողների ժամանակագրությունը, փորձ է արվել ստեղծել պատմամշակութային ընդհանուր համատեքստ, որոնք թույլ են տալիս հնարավորինս հստակեցնել կոթողների էթնոմշակութային պատկանելության հարցերը:

<u>Աշխատանքի կառուցվածքը:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, համառոտագրություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից (աղյուսակներ, քարտեզներ, նկարներ՝ համապատասխան ցանկերով):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանությունը, ինչպես նաև սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

ԳԼՈՒԽ Ի: ԱՐՑԱԽԻ ՔԱՐԵ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեղագրությունը: Աշխատանքի այս գլխում փորձել ենք ճշտել նախկինում հայտնի, բայց տեղահանված կոթողների սկզբնական տեղագրությունը: Այդ տվյալներին հավելել ենք նորահայտ կոթողների հայտնաբերման վայրերը և ընդհանուր տեղագրական պատկեր ստացել: Արդյունքում կարելի է նշել, որ դիտարկվող կոթողները տարածված են Արցախի լեռնաշխարհը և տափաստանը միմյանց ձուլող երկայնական տարածքում՝ ձգվելով մոտավորապես 30-40 կմ: Առաջին կոթողները հայտնաբերվել են Մարտակերտի տափաստանային մասի մի շարք վայրերից: Այսօր դրանց կուտակումներ կան Արցախի Տիգրանակերտի, ինչպես նաև վերջինից ոչ հեռու գտնվող Գյավուրկալա բնակատեղի շրջակայքում: Այս միջավայրից մի քանի կոթող էլ դեռևս խորհրդային տարիներին տեղափոխվել է Արցախի պետական և Մարտակերտի պատմա-երկրագիտական թանգարաններ, իսկ մի մասը շարունակում է ընկած մնալ բաց

դաշտում: Պետք է նշել, որ ինչպես նախկինում հայտնաբերված, այնպես և նորահայտ կոթողներից որևէ մեկը ներկայումս իր նախնական կանգնեցման վայրում (in situ) չէ: Քննության առնելով առկա տեղագրական պատկերը, կարելի է նշել, որ հայտնաբերման օջախները հետևյալն են՝ա. Մարտակերտ (Բախշուն թափա), բ. Սեյսուլան, գ. Կարմիրավան, դ. Ճանկաթաղ, ե. Գյավուրկալա և շրջակայք, զ. Սալահլու:

Քննության առնելով Արցախի քարե մարդակերպ կոթողների հայտնաբերման տեղեկությունները, կարող ենք փաստել, որ կոթողները հայտնաբերվել են ծովի մակերևույթից մինչև 500 մ բարձրության վրա: Այսինքն՝ այս շրջանը, որտեղից հայտնաբերվել են կոթողները, ամբողջությամբ համապատասխանում է Արցախի մարգագետնա-տափաստանային գոտուն: Բոլոր թվարկված օջախները գտնվում են Խաչենագետի ներքնահովտում (այնտեղ, ուր գետը դուրս է գալիս տափաստան) կամ նրա շրջակայքում: Ուսումնասիրվող տարածքը զբաղեցնում է Արցախի տափաստանի արևելյան մասը և նրանից արևելք ընկած Միլի տափաստանի ծայր արևմուտքը: Այն համապատասխանում է պատմական Արցախի Մուխանք, Մեծ իրանք և Ուտիքի Ուտի Առանձնակ և Ռոտ Պացեան գավառների տարածքներին:

Նկարագրություն: Աշխատանքի այս բաժնում ներկայացվել է կոթողների չեզոք նկարագրությունը, ինչի հիման վրա հաջորդիվ իրականացվել է պատկերագրական քննություն: Դիտարկվող կոթողներն ուղղանկյունատեսք, տափակ երկայնական սալեր են, որոնց ծավալային և քանդակային մշակումներով մարդատեսքություն է տրված: Նրանց հորինվածքի հիմնական առանցքը մարդու մարմինն է, և մնացած բաղադրիչները պատկերագրորեն և իմաստաբանորեն արժևորվում են նրա հանդեպ ունեցած կապի արդյունքում: Այս սալերը երկու հորիզոնական լայն ակոս-գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ «առանձնացնելով» մարմնի երեք մասերը՝ գլուխը, որը զբաղեցնում է ամբողջ կոթողի մեկ երրորդից մի փոքր քիչ ծավալ, իրանը և գոտկատեղից ներքևի հատվածը: Իրանից ներքևի հատվածը սովորաբար թեթև հղկվում էր: Այն նախատեսված է եղել հողի կամ հատուկ հիմքի մեջ դնելու համար: Կոթողներն ունեն մոտավորապես 30-60 սմ լայնություն, 120-140 սմ (եզակի դեպքերում մինչև 2 մ), բարձրություն և մոտավորապես 20 սմ հաստություն: Հայտնի բոլոր կոթողները պատրաստված են կրաքարից, որի ընդարձակ նստվածքները և հին մշակումների հետքերով հանքերը լայնորեն տարածված են Արցախի արևելյան նախալեռներում: Կոթողները ծավալային հստակ մշակումից զատ ենթարկվել են նաև բավականին մանրամասն քանդակային մշակման:

Կարելի է վավերացնել քանդակման երեք հիմնական տեխնիկա՝ ա. ետնախորքի հեռացում, բ. ակոսային քանդակ, գ. գծաքանդակ: Առաջին երկու տեխնիկաները հիմնական հորինվածքաստեղծ տեխնիկաներն են, իսկ գծային քանդակը կիրառվել է միայն առանձին դետալների մշակման ժամանակ:

Պատկերագրական քննություն: Նախորդ բաժնում իրականացրած նկարագրական քննությունը թույլ է տալիս վավերացնել, որ կոթողների պատկերագրությունը մեզ ներկայանում է առնվազն երկու համալիրներով՝ ա. մարմնակազմություն, բ. հանդերձանք (ներառյալ սպառազինությունն ու հարդարանքը):

Մարմնակազմական առումով կարելի է առանձնացնել մանրամասներ, որոնք բնորոշ են բոլոր կոթողներին, և մանրամասներ, որոնք առկա են մի մասի վրա: Ընդհանուր առմամբ պարտադիր մանրամասների թվին կարելի է դասել ձեռքերը, քիթը, որպես կանոն, աչքերը: Կոթողների նկարագրությունը թեև երևան չի բերում գլխանոցից զատ որևէ այլ կոնկրետ հանդերձանքի համալիր, սակայն նաև չկա ակնհայտ որևէ մանրամասն, որը հնարավոր դարձնի ենթադրել, թե նրանք մերկ են: Ավելին՝ մազերի, ականջների, բերանի, երբեմն էլ աչքերի բացակայությունը, մեջքին՝ գոտկամասում թեքությամբ պատկերված դաշույնը ավելի քան հավանական են դարձնում հագուստի և հանդերձանքի այլ համալիրների առկայությունը, որոնք ուղղակի կարևոր չեն դիտվել և չեն պատկերվել:

Կոթողների գլուխն ամենայն հավանականությամբ «ծածկված է» գլխանոցով, որը սկիզբ է առնում քունքերից և ներառում ողջ ճակատային մասը: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ այս կոթողների վրա բացակայում են բերանը, ականջները և մորուքը: Ամենայն հավանականությամբ նույն գլխանոցը ծածկում է ինչպես ճակատային մասը, այնպես և բերանը և ականջները: Քննության արդյունքում կարելի է փաստել, որ արցախյան կոթողները երևան են բերում ծայրահեղ սխեմատիզմ, ավելի շեշտելով պատկերագրության խորհրդանշական բնույթը:

Դեռևս անհայտ է, արդյոք գոյություն են ունեցել նմանատիպ փայտե կոթողներ, առավել ևս եթե նկատի ունենանք, որ կոթողների տեղագրությունը հպվում է Արցախի անտառային գոտուն: Տարածաշրջանից հայտնաբերված մի քանի կոթողներ հետազոտողներին հիմք են տալիս պնդել, որ որոշ դեպքերում եղել է փայտի գործածում ևս, սակայն հիմնական նյութը եղել է քարը: Ինչ վերաբերում է սեռին, ապա նկատի ունենալով, որ առնվազն հինգի վրա պատկերված է տղամարդկային ուժի խորհրդանիշ հանդիսացող դաշույնը և

մասնագիտական քննություններում առաջ քաշվող այն դրույթը, որ այն կոթողները, որոնք չունեն ընդգծված կանացի սիմվոլներ, պատկերում են տղամարդկանց, կարելի է ենթադրել, որ արցախյան բոլոր կոթողները պատկերում էին տղամարդկանց, հիմնականում պաշտպանական հանդերձանքով: Հավանական է նաև, որ զենքը սեռը ցույց տալուց բացի վկայում է պատկերվողի սոցիալական բարձր դիրքը:

Տիպաբանություն: Արցախի քարե մարդակերպ կոթողների նմանատիպ այլ կոթողների համատեքստում քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք կառուցվածքային, պատկերագրական, ինչպես նաև քանդակման տեխնիկայով զուգահեռներ ունենալով հանդերձ, չեն նույնանում նման կոթողների հայտնի որևէ այլ խմբի հետ և որոշակի առանձնացող խումբ են կազմում: Ելնելով որոշ բնութագրիչներից կարելի է եզրակացնել, որ «արցախյան» խմբի կոթողները միջանկյալ, անցումային տեսակ են մարդակերպ սալերի և մարդակերպ սյուների միջև: Ընդ որում այս խմբի ներսում՝ հիմք ընդունելով քանդակի տեխնիկան և պատկերագրությունը, հնարավոր է առանձնացնել հետևյալ տիպերը՝ ա. դաշույնակիր կոթողներ, բ. կոթողներ, որոնք չեն կրում դաշույն, գ. կոթողներ, որոնց դեմքը պատկերվել է ետնախորքի հեռացման միջոցով, դ. կոթողներ, որոնց դեմքը պատկերվել է ակոսային քանդակման տեխնիկայով:

ԳԼՈՒԽ II: ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ, ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակագրությունը: Արցախյան կոթողների թվագրության խնդիրը, թեև շատ թռուցիկ, արժանացել է կոթողներն ուսումնասիրող բոլոր հետազոտողների ուշադրությանը: Ընդ որում հավանաբար բոլորի համար էլ թվագրման հիմք են հանդիսացել Մովսես Դասխուրանցու (Կաղանկատվացու) «Աղվանից պատմության» այն հատվածները, ուր նկարագրվում են խազարական արշավանքներն ու խազար ռազմիկների արտաքինը. երկարամազ ու հերարձակ, առանց հոնքերի ու մորուքի: Նկարագրված կերպարները որոշակի հատկանիշներով համապատասխանում են արցախյան կոթողներին պատկերված կերպարին: Ելնելով դրանից՝ Շ. Մկրտչյանը Սեյսուլան 2, 3 կոթողները թվագրում է մ.թ. 7-րդ դարով: Մ. Խալիլովը կարծում է, որ կոթողները կանգնեցվել են մ.թ. 4-7-րդ դդ., իսկ Ռ. Գեուշևը՝ մ.թ. 7-8-րդ դարերում, տեղի քրիստոնյաների կողմից:

Քննարկված կոթողների ակնհայտ տիպաբանական պատկերագրական նմանությունը ավելի վաղ կոթողների հետ արդեն իսկ բացառում է նման ուշ

թվագրությունը: Բայց այսօր մենք արդեն կոնկրետ հնագիտական նյութ ունենք վերջիններիս թվագրության վերաբերյալ: Ի մասնավորի Տիգրանակերտ 1 և Գյավուրկալա 1 կոթողները օգնում են հստակեցնել այդ հարցը: Տիգրանակերտ 1 կոթողը հայտնաբերվել է Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակի երկրորդ եկեղեցու հարավային բակի՝ դեպի հարավային մուտքն առաջնորդող խոշոր սալերի շարքում, իսկ եկեղեցին թվագրվում է 5-րդ դարի վերջով: Երկրորդ՝ Գյավուրկալա 1 կոթողը, հայտնաբերվել է Գյավուրկալայի վաղքրիստոնեական եկեղեցուց մոտ 70 մ արևելք: Ինչպես ցույց տվեցին հետագա պեղումները, այն վերաօգտագործվել է և ծառայել որպես վաղքրիստոնեական սալարկղային թաղման ծածկասալ: Հետևաբար կարելի է փաստել, որ առնվազն 5-6-րդ դարերում, այս կոթողները կորցրել էին իրենց հիմնական գործառույթը և ենթարկվել կրկնակի օգտագործման:

Արցախի կոթողների ժամանակագրությունը պարզելու համար հնագիտական պեղումների տվյալներից այս դեպքում հնարավոր չեղավ շատ տեղեկություն ստանալ: Կոթողների միայն մեկ խումբն է (Բախշուն թափա 1-9) գտնվել իր նախնական կանգնեցման վայրում, որը հայտնաբերվել է այգեգործական աշխատանքների ժամանակ: Հայտնաբերման ընթացքը և հանգամանքները, սակայն, համապատասխան մեթոդաբանությամբ չեն վավերացվել: Այստեղ Արցախի հնագիտական արշավախմբի մի ջոկատի կողմից 2013 թվականին իրականացրած պեղումների արդյունքում որևէ մշակութային շերտ, կամ արտեֆակտ, որը կարող էր թվագրության համար հիմք ծառայել, չի հայտնաբերվել: Ուստի կոթողների ավելի կոնկրետ թվագրության նպատակով հարկ է դիմել համեմատական-ձևաբանական քննության մեթոդին: Արցախի քարե մարդակերպ կոթողներին քիչ թե շատ մոտ Հյուսիսային Կովկասից, Մերձսևծովից, Ղրիմից, ինչպես նաև Մեշքին Շահրից և Հաքարիից հայտնի կոթողներն ըստ տարբեր հետազոտողների թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջից մինչև մ.թ. 3-4-րդ դարեր[1]:

Ինչպես մոտ զուգահեռների քննությունը, այնպես և քննարկվող կոթողների պատկերագրական որոշ դետալներ (ձեռքերի դիրքը, դաշույնների տիպը, եղջերագավաթի բացակայությունը) և քանդակման տեխնիկան (ուսերի և վզի բացակայություն, «փակ աչքեր» և այլն), հնարավորություն են տալիս հավաստել, որ ի դեմս արցախյան կոթողների գործ ունենք այս շարքի առավել վաղ

[1] Ольховский В. Евдокимов Г. Скифские изваяния VII-III вв. до н.э., Москва, 1994, Burney Ch. Meshkinshahr survey, Iran, vol. XVII, 1979, p. 155-157, Sevin V. Who where the Naked Warriors of Hakkari? AMIT, 37, 2005, p. 163-166.

դրսևորումների հետ: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս կոթողների արցախյան խումբը թվագրել մ.թ.ա. 8-րդ դարի վերջերից մինչև մ.թ.ա. 6-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածով: Այս ժամանակագրական միջակայքը չի ենթադրում այս դարերի ընթացքում նրանց անընդմեջ գոյություն այս շրջաններում: Ներկա քննությամբ սահմանել ենք վերին և ստորին ժամանակագրական սահմանները, որում այս կոթողները կարող էին կանգնեցված լինել:

Գործառույթը: Քանի որ չի հաջողվել արցախյան կոթողները վավերացնել իրենց կանգնեցման նախնական վայրում, նրանց գործառույթի հարցը պարզելու համար դարձյալ դիմել ենք զուգահեռ նյութի հետ համեմատական քննությանը: Հայտնի զուգահեռ կոթողների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Արցախից հայտնաբերված կոթողները, ամենայն հավանականությամբ հանդիսանում էին գերեզմանաքարեր, և/կամ պաշտամունքային սիմվոլներ, որոնք տեղակայվում էին դամբանաբլուրի գագաթին կամ սրբարանի կենտրոնում, չի բացառվում՝ նաև հիմնահողային թաղումների վրա: Մեզ հայտնի է միայն Բախշուն թափա 1-9 կոթողների հայտնաբերման պայմանները և վայրը: Ըստ տվյալների, դրանք հայտնաբերվել են բլրի հարթեցման աշխատանքների արդյունքում: Կոթողները բլրի հետ ի՞նչ կապի մեջ են եղել, նրա ո՞ր մասում են գտնվել՝ պարզ չէ: Մեկ այլ հանգամանք ևս, ինչը կարող է խոսել կոթողների և դամբանաբլուրների հնարավոր կապի մասին: Գյավուրկալայից ոչ հեռու որոշ կոթողների հայտնաբերման շրջակայքում՝ Հայկաջուր և Նոր Մարաղա գյուղերի միջակայքում, սփռված են շուրջ 15 դամբանաբլուրներ: Գուցե հետագա հետազոտությունները պարզեն, թե ինչքանով է իրական կամ հնարավոր դամբանաբլուրների և քարե մարդակերպ կոթողների կապը: Առայժմ կարելի է վավերացնել միայն նրանց տեղադրության մերձավորությունը:

Ամենայն հավանականությամբ, այս կոթողները զուտ գերեզմանաքարեր լինելուց բացի, ունեցել են այլ գործառույթ ևս: Քանի որ, կոթողներն այս կամ այն կերպ հարաբերվել են քոչվոր կենսակերպ վարող ցեղերի հետ, ովքեր, մշտական բնակավայր չեն ունեցել, կոթողներն ինչ-որ առումով նաև «սահմանաքարի», բաց դաշտում տարածքի կողմնորոշման և որոշակի ցուցիչի դեր նույնպես կարող էին կատարել: Արցախյան կոթողներից մի քանիսը հետագայում վերաօգտագործվել են՝ հիմնականում ծառայելով որպես շինանյութ: Դիտարկվող 22 կոթողից առնվազն հինգի դեպքում ակնհայտ է վերաօգտագործման փաստը: Վերաօգտագործման բոլոր դեպքերում ակնհայտ

է, որ այն տեղի է ունեցել ավելի ուշ ժամանակաշրջանում և չի կարելի խոսել կոթողը կանգնեցնող հանրույթի կողմից դրանց վերաօգտագործման մասին:

Իմաստաբանությունը: Մասնագիտական գրականության մեջ նմանատիպ կոթողների իմաստաբանության վերաբերյալ կան բազմաթիվ տեսակետներ: Ըստ ամենատարածված կարիծիքի՝ դամբանաբլրի գագաթին կանգնած կոթողը պատկերում էր պարզապես ցեղի մահացած անդամին, երբեմն գուցե հերոսին, ռազմիկին կամ նախահորը:

Հարկ է նշել, որ այս կոթողները նախևառաջ արտացոլում են ժամանակի ծիսական-առասպելական ընկալումները: Այդ մասին խոսում են կոթողներին քանդակված մի շարք ատրիբուտներ՝ այդ թվում դաշույնի պատկերումը, այն կրելու ձևը, ինչպես նաև ձեռքերի դիրքը և այլն: Քննարկվող կոթողների առասպելական ընկալման ցուցիչ է նաև դրանց կառուցվածքային որոշ մանրամասներ: Բոլոր կոթողները, ինչպես նշել ենք, հստակ եռամաս են: Այս կոթողները կանգնեցնողներն ունեցել են հարուստ առասպելական ընկալումներ՝ տիեզերքի եռամասնության, տիեզերական սյան կամ ծառի վերաբերյալ: Երբ մարդկային մարմնի եռամաս կազմությունը (գլուխ, իրան, ոտքեր) համադրվում է տիեզերքի եռամաս ուղղաձիգ կառուցվածքի հետ ակնհայտ է դառնում, որ մարդու գլուխը համապատասխանում է երկնքին, իրանը՝ միջնաշխարհին, երկրին, իսկ ներքնամասը (ոտքերը)՝ ստորերկրայքին: Կոթողներն իրենց մեջ կրում են նաև աշխարհաստեղծման ընդհանրացված պատկերացումները՝ պատկերելով առասպելական կենտրոնական տարրը՝ ուղղահայաց առանցքը (աշխարհի առանցքը, համաշխարհային սյունը, ծառը, ֆալոսը և այլն):

Ինչ վերաբերում է այս կոթողներին պատկերված կերպարին, ապա նշենք, որ համադրելով եղած տեսակետները կարելի է նշել, որ զորապետ-ռազմական առաջնորդի և/կամ հերոս-ռազմիկի պատկերումն ամենահավանականն է Արցախի կոթողների համար:

ԳԼՈՒԽ III: ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Կիմմերները և սկյութներն Արցախում և Ուտիքում. հայտնվելն ու սփռումը, քաղաքական պատմությունը: Արցախի քարե մարդակերպ կոթողների էթնոմշակութային պատկանելության խնդիրներն հնարավորինս անաչառ ներկայացնելու և հասկանալու համար հարկավոր է Արցախը դիտարկել ընդհանուր եվրասիական և առաջավորասիական պատմական համատեքստում:

Մ.թ.ա. 8-7-րդ դարերում Առաջավոր Ասիայում տեղի ունեցան մի շարք նշանակալի իրադարձություններ, որոնք կարևոր դեր խաղացին ոչ միայն այս տարածաշրջանի, այլև հարևան շրջանների վրա: Այս իրադարձությունները մեծապես կապվում են կիմմերական ու սկյութական ցեղերի ներթափանցման հետ: Մ.թ.ա. 8-6-րդ դարերի Առաջավոր Ասիայի պատմության վերաբերյալ համեմատաբար քիչ սկզբնաղբյուրներ կան: Մենք բավականաչափ տեղեկություն չունենք տարածաշրջանի վրա մեծ ներգործություն ունեցած այս ցեղերի մասին: Այս շրջանը որոշ չափով արտացոլված է ասսուրական գրավոր տեքստերում, առանձին հիշատակություններ կան հինկտակարանային մարգարեներին վերագրվող տեքստերում, և որոշ տվյալներ հաղորդում են հույն և հռոմեացի հեղինակները:

Հին Արևելքի պատմության, նյութական և հոգևոր մշակույթների լուսաբանման գործում Աստվածաշունչը եզակի և արժանահավատ սկզբնաղբյուր է: Համաձայն Հին կտակարանի՝ Թորգոմը և Ասքանազը (Աշքենազ) Հաբեթի որդի Գոմերի զավակներն են, հետևաբար նաև հաբեթական ժողովուրդների մի մասի ազգածին նահապետները: Ինչ վերաբերում է Ասքանազի սերունդների կամ ասքանազյան ցեղերի էթնիկական պատկանելությանը, ապա բոլոր ուսումնասիրողներն էլ միահամուռ դրանց տակ տեսնում են սակա-սկյութա-սարմատական էթնիկ հանրությանը: Կիմմերների և սկյութների պատմության վերաբերյալ մեր տեղեկությունների հաջորդ սկզբնաղբյուրը հույն և հռոմեացի հեղինակներն են: Նրանց պատմության որոշ հատվածներ մեզ հասել են Քսենոփոնի, Ստրաբոնի, իսկ առավել ամբողջական՝ Հերոդոտոսի աշխատություններում: Հերոդոտոսը մ.թ.ա. 450 թ. այցելելով Մերձսևծովի հյուսիսային շրջաններ, տեղեկություններ է հաղորդել կիմմերների և սկյութների վերաբերյալ: Նա իր պատմության IV գրքի առաջին ենթագլխում խոսում է կիմմերների և սկյութների ծագման, ինչպես նաև դեպի Առաջավոր Ասիա նրանց ներթափանցման մասին: Համաձայն Հերոդոտոսի հաղորդման՝ «Ասիայում բնակվող սկյութները, պատերազմում նեղվելով մասսագետներից, անցել են Արաքս գետը և եկել կիմմերների երկիրը, քանզի... ներկայումս սկյութների զբաղեցրած երկիրը անցյալում պատկանելիս է եղել կիմմերներին»: Կիմմերները, չկարողանալով դիմադրել սկյութներին, փախչում են նրանցից և հաստատվում այն թերակղզում, «որտեղ գտնվում է հելլենների հիմնած Սինոպէ քաղաքը»: Պատմիչը նշում է նաև, որ կիմմերները մշտապես շարժվում էին ծովափով, իսկ սկյութները հետապնդում էին նրանց: Այնուամենայնիվ, սկյութները շեղվում են դեպի վերին՝ շատ ավելի երկար ճանապարհը՝ Կովկաս

լեռն ունենալով իրենց աջ կողմում՝ մինչև որ մտնում են Մարաստան երկիր: Այստեղ մարերը ճակատամարտում են սկյութների դեմ և պարտվելով, կորցնում իրենց իշխանությունը, իսկ սկյութները տիրում են ամբողջ Ասիային: Այսպիսով, սկյութները քսանութ տարի տիրեցին Ասիայում: Սրանց մեծ մասին Կյուաքսարեսը և մարերը հրավիրեցին խնջույքի և, հարբեցնելով՝ կոտորեցին, ապա վերանվաճեցին իրենց նախկին տիրույթները և նորից վերականգնեցին իրենց իշխանությունը:

Կիմմերների և սկյութների՝ Առաջավոր Ասիայում հայտնվելու վերաբերյալ մի փոքր այլ բան են հաղորդում սեպագիր աղբյուրները: Ըստ այդ տեղեկությունների՝ կիմմերները հայտնվել են Առաջավոր Ասիայում սկյութների հայտնվելուց շատ առաջ: Կիմմերները հիշատակվում են ասսորական հուշարձաններում դեռ մ.թ.ա. 8-րդ դարի վերջում, այն դեպքում երբ առաջին վկայությունները սկյութների մասին Առաջավոր Ասիայում վերաբերում են մ.թ.ա. 7-րդ դարի 70-ական թվականներին: Այդ շրջանում կիմմերների պատմությանը ասսուրական թագավորական արխիվից նվիրված է վեց նամակ[2]: Ի տարբերություն կիմմերների՝ սկյութները ասսուրական փաստաթղթերում հիշատակվում են կիմմերներից բավական քիչ: Հավանական է, որ գրիչները հաճախ շփոթել են նրանց: Սեպագիր աղբյուրների հաղորդած տեղեկությունները համադրելով կարելի է հանգել հետևյալին՝ ա. այդ ցեղերը Ասորեստանի համար վտանգավոր ռազմական ուժ են ներկայացրել, բ. նրանք դաշնակցային հարաբերություններով կապված են եղել Մարաստանի հետ և ինչ-որ ժամանակահատված եղել են նրանց տարածքում, գ. սկյութներն ունեցել են ռազմական առաջնորդներ կամ արքաներ, որոնցից երկուսի անունը՝ Իշպակա և Պարտատուա, մեզ է հասել, դ. Պարտատուայի ժամանակ նկատվել է սկյութների և Ասորեստանի միջև մերձեցում և գուցե նրանց նախկին դաշնակիցների փոփոխություն, ե. հիշատակվում է սկյութների երկիրը՝ Իշկուզան:

Շուրջ մեկուկես դար վերոհիշյալ տարածքներում սարսափ տարածած այս զորաջոկատները, մոտավորապես մ.թ.ա. 6-րդ դարի երկրորդ քառորդից աստիճանաբար թողեցին Առաջավոր Ասիայի սահմանները: Հետդարձին նրանք իրենց հետ տարան ոչ միայն կողոպտված հարուստ ավարը, այլև արհեստագործական այն նորամուծություններն ու հնարքները, որոնք ձեռք էին

[2] Иванчик А. Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II, ВДИ, 1990, № 3, Москва, с. 3-5.

բերել տեղի բարձր մշակույթների հետ ունեցած անմիջական շփումների արդյունքում:

Սկյութների մշակութային ժառանգությունն Արցախ-Ուտիքում. հնագիտական հուշարձաններ և նյութեր, տեղանվանաբանական և անձնանվանաբանական նյութի քննություն: Արցախ-Ուտիքի տարածքում և շրջակայքում կիմմերների և սկյութների հայտնվելու վերաբերյալ պատմական սկզբնաղբյուրները գրեթե լռում են: Մեր տեղեկությունները հենվում են մ.թ.ա. 1-ին դարի և ավելի ուշ շրջանի աղբյուրների վրա, որոնք վերաբերում են Կովկասյան Աղվանքին: Համաձայն այդ տեղեկությունների Աղվանական թագավորությունը ստեղծվել է 26 ցեղերի հիման վրա: Գրավոր սկզբնաղբյուրների ներգրավմամբ այս խնդրի ամենամանրամասն քննությունն իրականացրել է Ալեքսան Հակոբյանը և մենք Արցախ-Ուտիքի՝ այս ժամանակաշրջանի պատմամշակութային համապատկերի վերականգնմանն ուղղված մեր քննության մեջ առավելապես հենվել ենք հետազոտողի հիմնավորումների վրա: Ըստ նրա այդ ցեղերի մեջ եղել են նաև սկյութական ցեղեր: Ստրաբոնի տեղեկությունների քննությունը հնարավոր է դարձնում հավաստել, որ նրա հիշատակած ցեղերից առնվազն երկուսը՝ գելերը և լեգերը, սկյութական ծագում ունեին[3]:

Միևնույն ժամանակ կիմմերների և սկյութների Արցախ-Ուտիքում հայտնվելու վերաբերյալ նյութի քննությունը հնարավորինս ամբողջացնելու համար պատմական սկզբնաղբյուրների քննությանը հավելել ենք հնագիտական, տեղանվանաբանական և անձնանվանաբանական սկզբնաղբյուրներ ևս: Այդ տվյալները ոչ միայն կոնկրետացնում և հստակեցնում են պատմական սկզնաղբյուրների տվյալները, այլև տալիս են մի շարք հարցերի պատասխաններ, որոնք առհասարակ լուսավորված չեն գրավոր հին աղբյուրներում: Խնդիրն առավել արդիական հնչեղություն է ստանում, երբ նկատի ենք ունենում, որ նշված տարածքները երբեք ամբողջական համատեքստում չեն ուսումնասիրվել:

Չնայած հնագիտական սկզբնաղբյուրները փաստում են, որ Անդրկովկասի և Իրանական սարահարթի միջև մշակութային այդ կապերը ծագել են դեռևս մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, առանձին դեպքերում գուցե և ավելի վաղ, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Բեսսոնովան[4], այդ մշակութային

---

[3]Акопян А. Албания-Алуанк в греко-лаинских и древноармянских источниках, Ереван, 1987, с. 38-39.

[4] Бессонова С. Религиозные представление скифов, Киев, 1983, с. 5-8.

հարաբերությունները երբեք այնպիսի բարձր մակարդակի չեն հասել, ինչպես եղավ սկյութների ժամանակ, ովքեր առավել ակտիվ գործել են մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբին՝ մ.թ.ա. 8-7-րդ դարերից սկսած: Աշխատանքում «սկյութական նյութական մշակույթի տարրերի» տակ քննարկվել են՝ ա. սկյութական տիպի զենքը (նետասլաքներ, ակինակներ և այլն), բ. սկյութական տիպի թաղումները, գ. տարբեր գտածոներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են սկյութական մշակույթին:

Սկյութների պատմության մեջ վիճելի է սկյութական թագավորության տեղակայման հարցը: Աշխատանքում փորձել ենք համառոտ անդրադառնալ այս հարցի շուրջ եղած հիմնական տեսակետներին: Հարցով զբաղվել են ոչ միայն հնագետները, այլ նաև պատմաբանները: Պետք է նշենք, որ չնայած այն բանին, որ գրավոր սկզբնաղբյուրները կարծես, հիմք են տալիս հաստատելու «սկյութական թագավորության» գոյությանը Միլի տափաստանում, հնագիտական նյութերը, որոնք առկա են հետազոտողների ձեռքի տակ, այդ հարցը կասկածի տակ են դնում: Նշված խնդրի մանրամասն քննություն է իրականացրել Մ. Պոգրեբովան[5]: Դիտարկելով այս հարցի վերաբերյալ բոլոր տեսակետները նա առանձնացնում է երեք մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն հնագիտական նյութը ոչ մի հիմք չի տալիս սկյութական թագավորությունը Անդրկովկասում տեղայնացնելու համար, և մնում է ընդունել, որ այդպիսին այստեղ չի եղել: Համաձայն երկրորդի՝ սկյութական թագավորության տեղադրությունը Սակասենի շրջանում (ներկայիս Քուռ գետի միջին հոսանքը՝ ներկա Ադրբեջանի Գանձակից մինչև Մինգեչաուր ընկած հատվածը), պատմականից բացի, ունի և հնագիտական հաստատում, որոնք են Մինգեչաուրի ուղղաձիգ իրանով թաղումները և սկյութական տիպի նետասլաքները: Եվ վերջապես, երրորդ մոտեցման համաձայն, այդպիսի միավորում, ինչպիսին եղել է սկյութական թագավորությունը առաջավորասիական արշավանքների ժամանակ, ընդհանրապես պետք է, որ չթողներ որևէ հնագիտական հետք: Քննության արդյունքում հավանական ենք համարում, որ թեև Դերբենդի լեռնանցքով Անդրկովկաս ներխուժած սկյութները սկզբնապես հաստատվել են Արցախի և Միլի ընդարձակ տափարակում և դրա արդյունքում պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանը՝ Արցախ-Ուտիք աշխարհի հյուսիս-արևմտյան հատվածը, նրանց անունով է կոչվել

[5] Погребова М. Закавказье и его связи с Передней Азией в скифское время, Москва, 1984, с. 22-24.

Սակասեն, սակայն եղած տեղեկությունները բավարար չեն սկյութական թագավորությունը այս շրջանում տեղակայելու համար:

Կարելի է փաստել, որ կիմմերա-սկութական մշակութային և էթնիկական տարրն Արցախ-Ուտիքում փաստվում է այնպիսի հնագիտական գտածոներով, ինչպիսիք են սկյութական տիպի թաղումները, սկյութական տիպի զենքերը (նետասլաքները, ակինակներ), մի շարք հնագիտական արտեֆակտեր (բորնզի հայելի, «փշավոր գուրզ», Գանձակի մերձակայքում՝ Մինգեչաուրի դամբարաններից մի փոքր հարավ պատահաբար հայտնաբերված գլխանոց կրող «սկյութի» մ.թ.ա. 5-4-րդ դդ. թվագրվող թրծակավե արձանիկ, որոշ քարե կոթողներ և այլն): Մ. Պոգրեբովան նշում է, որ Արցախում ամենավաղ սկյութական հուշարձանը Փոքր կուրգանն է, որը վերաբերում է մ.թ.ա. 7-րդ դարին: Այն գտնում է Միլի տափաստանում՝ նախկին Օրջոնիկիձեի շրանցքից մոտ 3 կմ հարավ-արևմուտք գտնվող Կամիլ թեփեի հարևանությամբ:

Հնագետներին, լեզվաբաններին և պատմաբաններին ուսումնասիրության մեծ աղբյուր է տրամադրում նաև որոշ տեղանունների քննությունը: Արցախում և հարակից շրջաններում կան որոշ բնակավայրեր, որոնք գիտնականներն այս կամ այն կերպ կապում են իրանական ցեղերի՝ մասնավորաբար կիմմերների և սկյութների հետ: Ըստ տարբեր հետազոտողների՝ այս ցեղերի հետ աղերս ունեն Շակաշեն/Սակասեն (ներկայիս Գանձակն ու շրջակա տարածքները (այն է՝ «շակերի (սակերի) շեն (բնակավայր)), Գանձակին մոտ գտնվող ժամանակակից Շաքի քաղաքի, Շիկաքար (ըստ Բ. Տեխովի՝ «սկյութի ժայռ») տեղանունները, Դերբենտի շրջանից հարավ Ճորա լեռնանցքի անվանումը և այլն: Հայկական լեռնաշխարհի մյուս շրջաններում ևս առկա են տեղանուններ, որոնք գիտնականները այս կամ այն կերպ կապում են սկյութների հետ: Բնական է, որ այդ ցեղերի համար մեծ հետաքրքրություն կներկայացնեին Արցախի, Միլի, Շիրակի և այլ դաշտավայրային հատվածներ ևս: Եթե սկյութական ծագման տեղանունները որոշակի թիվ են կազմում այս տարածքում, ապա անվանաբանական բազան շատ հարուստ չէ: Հայագիտության մեջ ընդունված է կարծել, որ Մովսես Խորենացու հիշատակած հայոց առաջին թագադիր արքա Սկայորդու որդի Պարույրը համապատասխանում է գրավոր աղբյուրներում հիշատակվող սկյութների արքա Պարտատուային:

Մարդակերպ կոթողների էթնոմշակութային պատկանելության խնդիրը: Ինչպես հայտնի է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջը-1-ին հազարամյակի սկիզբն Անդրկովկասում համարվում է բրոնզե մետաղագործության ինտենսիվ զարգացման, և քայլ առ քայլ երկաթի ինդուստրիային անցնելու շրջան:

Հավանաբար, երկաթի լայն գործածումն էր նաև պատճառը, որ, դատելով հնագիտական նյութից, գրեթե ամբողջ Կովկասում տարածվում են քոչվորական զանազան ցեղեր, որոնց բնորոշ էին նոր զենքեր, ձիասարք, հատուկ թաղման ծես, կենցաղային որոշ առանձնահատկություններ: Եթե այդ տվյալներին հավելենք այլ գիտակարգերի տրամադրած տեղեկությունները, ապա հասկանալի է դառնում քոչվոր ցեղերի խոշոր տեղաշարժերի պատճառներն ու շարժառիթները: Հավանական է, որ այդ ցեղերի տեղաշարժերի պատճառ են հանդիսացել նաև կլիմայական պայմանները: Վ. Կլիմենկոն նշում է, որ Եվրասիայում վերջին 5000 տարում ամենաուժեղ սառեցումը տեղի է ունեցել մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. 5-րդ դարի առաջին կեսը: Գրավոր սկզբնաղբյուրների տվյալները, որոնք ամբողջությամբ համապատասխանում են հնագիտականին, թույլ են տալիս ենթադրել, որ այդ ցեղերի շարքում առանձնակի դերակատարում են ունեցել կիմմերա-սկյութական ցեղերը: Այս շրջանում Անդրկովկասը ակտիվ մշակութային կապերի մեջ էր Առաջավոր Ասիայի երկրների հետ: Այս կապերն ուղղված էին ինչպես Անդրկովկասից դեպի Առաջավոր Ասիայի երկրներ, այնպես էլ հակառակը: Հավանաբար, նման մշակութային դրսևորումների արդյունք են և դիտարկվող մարդակերպ կոթողները:

Արցախը և Ուտիքը, կամ առնվազն նրանց տափաստանային հատվածները, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ տեղավորվում էին Կովկասը Իրանին կապող ճանապարհների մեջ: Հավանաբար այս կապերի արդյունքում է, որ Արցախում կանգնեցվել են հայտնի մարդակերպ կոթողները, որի զուգահեռները մենք տեսնում են Իրանական սարահարթից մինչև Հյուսիսային Կովկաս, Մերձսևծով և այլուր: Չնայած առկա որոշ պատկերագրական տարբերություններին, այս կոթողների միևնույն մշակութային ընդհանրությանը պատկանելն ակնհայտ է: Հետազոտողները խոսում են սկյութների կողմից հինարևելյան արձանների կրկնօրինակման մասին: Այս դեպքում, կարծես թե, կարելի է խոսել կիմմերների և սկյութների կողմից հին իրանական այս ավանդույթը կրկնելու մասին: Գուցե իրենց ռազմական արշավանքների և այլ շփումների արդյունքում կիմմերներն ու սկյութները տեսել են այս կոթողները և հետագայում որոշ գաղափարական և ձևաբանական հավելումներ տալով՝ ստեղծել են սեփական կոթողները: Նախնական դիտարկումներն անգամ բավական են նկատել վաղ իրանական այս կոթողների ազդեցությունը Արցախից, Հյուսիսային Կովկասից և այլ շրջաններից հայտնի նմանատիպ կոթողների վրա:

Այնուամենայինով, մենք վերջնական եզրակացություններ չենք անում և գիտակցում ենք արտահայտված տեսակետների վիճարկելիության հնարավորությունը: Մեր վարկածի «փորձաքննությունը» հնարավոր կլինի հետագա հետազոտությունների և նոր սկզբնաղբյուրների ներառման դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Արցախի քարե մարդակերպ կոթողների քննությունը, կարելի է նշել, որ

ա. Դիտարկված քսաներկու կոթողները, տեղակայվում են դաշտային կամ տափաստանային Արցախի մի բավականին պարփակ շրջանում: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Կուրի աջափնյակում՝ զբաղեցնելով՝ Արցախի տափաստանի արևելյան մասը և նրանից արևելք ընկած Միլի տափաստանի ծայր արևմուտքը:

բ. Կոթողների պատրաստման համար կիրառվել է քանդակման մի քանի տեխնիկա, ինչը խոսում է այն կանգնեցնողների հարուստ մշակութային ավանդույթի մասին: Սակայն այսքանով հանդերձ կարելի է փաստել, որ կոթողների պատկերագրությունը խիստ սխեմատիկ է, ժլատ, ակնհայտորեն չեն պատկերվում մարմնակազմական շատ մանրամասներ, թեև դրանց «առկայությունը» ենթադրելի է: Զուսպ են նաև քանդակի տեխնիկական միջոցները: Կոթողների նկարագրական քննությունը թույլ է տալիս վավերացնել, որ պատկերագրությունը մեզ ներկայանում է առնվազն երկու համալիրներով՝ ա. մարմնակազմություն, բ. հանդերձանք (ներառյալ սպառազինությունն ու հարդարանքը):

գ. Քանդակի տեխնիկական համեստ զինանոցը, պատկերագրական սխեմատիզմն ու «ժլատությունը» հիմք են տալիս հավանական համարել, որ ի դեմս արցախյան կոթողների, գործ ունենք մի ընդարձակ պատմամշակութային երևույթի նախնական դրսևորման հետ: Այս տեսակետից ուշագրավ են հատկապես այն նմանությունները, որ առկա են կիմմերական և վաղ սկյութական կոթողների միջև: Կարծում ենք, բավարար հիմք կա ենթադրելու, որ արցախյան կոթողները վերաբերում են բավական ընդարձակ տարածություն ընդգրկող քարե մարդակերպ կոթողների վաղ խմբին: Ինչպես մոտ զուգահեռների քննությունը, այնպես և քննարկվող կոթողների պատկերագրական որոշ դետալներ և քանդակման տեխնիկան հիմք են տալիս կոթողները թվագրել մ.թ.ա. 8-րդ դարի վերջ-6-րդ դարի սկիզբով:

դ. Արցախից հայտնաբերված կոթողները ամենայն հավանականությամբ հանդիսացել են գերեզմանաքարեր, և/կամ պաշտամունքային սիմվոլներ, որոնք

կանգնեցվել են կոլեկտիվի որևէ անդամի մահվան դեպքում: Սրանք պատվանդանի մեջ կամ առանց պատվանդանի տեղակայված են եղել դամբանաբլուրի գագաթին կամ սրբարանի կենտրոնում, չի բացառվում, որ նաև հիմնահողային թաղումների վրա: Կոթողները հավանաբար իրենց մեջ կրում են աշխարհաստեղծման ընդհանրացված պատկերացումները՝ պատկերելով կենտրոնական տարրը՝ ուղղահայաց առանցքը (աշխարհի առանցքը, համաշխարհային սյունը, ծառը, ֆալոսը և այլն):

ե. Հիմք ընդունելով Մեշքին Շահրի և Արցախի կոթողների համեմատական-պատկերագրական քննությունը, որն ակնհայտորեն ցուցում է Արցախի կոթողների ավելի զարգացած, ուստի և ժամանակագրորեն մի փոքր ավելի ուշ լինելու հանգամանքը, մենք ներկա հետազոտության արդյունքում առաջադրում ենք այն վարկածը, որ կիմմերա-սկյութական ցեղերի թերևս առաջին ալիքը՝ մ.թ.ա 8-7-րդ դարերում ներթափանցելով իրանական սարահարթ, այստեղից է փոխառել և դեպի հյուսիս, այդ թվում և Արցախ տարածել մարդակերպ կոթողների մշակույթը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Երանյան Ն., Երկու քարե մարդակերպ կոթող Ջուլֆանից, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, VIII, Երևան, 2012, էջ 73-78:
2. Երանյան Ն., Արցախի քարե մարդակերպ կոթողները, ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու, հտ. 3, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 168-172:
3. Երանյան Ն., Մարտակերտի քարե մարդակերպ կոթողները (պատկերագրությունը և տիպաբանությունը), Հայ գչատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, հտ. 4, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 110-113:
4. Երանյան Ն., Նորահայտ մարդակերպ կոթողներ Դաշտային Արցախից, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու. ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի նյութեր, 1.6 (9), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 190-195:
5. Երանյան Ն., Նոր տվյալներ Արցախի երկաթեդարյան մշակույթի վերաբերյալ, «Վէմ» համահայկական հանդես, 3 (51), Երևան, 2015, էջ 128-140:

6. Երանյան Ն., Դաշտային Արցախի մարդակերպ կոթողները, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 118-122:

NZHDEH A. YERANYAN

ANTHROPOMORPHIC STELAE of PLAINS ARTSAKH: TOPOGRAPHY, TYPOLOGY, FUNCTIONS, HISTORICAL AND CULTURAL CONTEXT

SUMMARY

Anthropomorphic stone stelae are appearing in Southwestern Asia and Eurasian steppes from 4-3th centuries BC and most actively started spreading at the end of the 2-1st century BC. The last are seen both in Northwestern Iran (Meshkin Shahr), Middle Asia, Siberia, Europe, North Caucasus, The Crimea, The Black Sea regions and in the Armenian Highlands and around (in Hakari, situated in Korchajq-Korduk), in a number monuments of Republic of Armenia (Metsamor, Shavarshavan, Mrgavan, Harjis, Lori Berd, Jujevan, Dvin etc.). According to the most popular scientific notation these anthropomorphic stone stelae and their diversity are different performances of a very durable and wild-ranging cultural tradition. With the existing materials of 2-1st centuries BC Armenia distinguishes with some diversity and it can be assumed that Artsakh stelae are manifeestation of this diversity.

20 stelae were physically available for the investigation, we also got some details about 2 stelae from the researchers' field diaries and some other photos. Observed twenty-two stelae are situated infield or prairie fairly compact area of Artsakh. The studied area is situated in the right bank of Kura river, occupying the eastern part of Artsakh steppe.

Several sculpturing techniques were used for the creation of the stelae, which shows the rich tradition of sculpturing. But despite this it can be stated that the iconography of the stelae is too schematic, stingy, many details of the physique are not depicted, although their "presence" is assumed. Technical means of the sculpture are also restrained. Stelae descriptive test allows to ratify that the iconography is presented at least with two complexes: a. physique, b. equipment (including weapons and grooming).

The Sculpture technical modest arsenal, iconographic schematic and "greed" grounds to assume that in the name of Artsakh stelae we are dealing with the initial manifestation of a broad cultural phenomenon. This is especially remarkable in terms of the similarities that exist between the common Eurasian early Cimmerian and Scythian series of the stelae. We think that this is a sufficient reason to assume that a large area covering the Artsakh steale is a nearly group of anthropomorphic stone stelae. As the

study of close parallels, so some iconographic details and sculptural technique of the discussed stelae afford ground to date these stelae through 8th - 6th centuries BC interval.

Stelae discovered in Artsakh were likely tombstones, and / or religious symbols, which were placed in the event of death of any member of the group. These in a pedestal or without pedestal form were located on the top of kurgan or in the center of sanctuary, and it is not excluded that on inland burials. The stelae probably carry generalized ideas of the creation, depicting the central element, the vertical axis (the axis of the world, world column, tree, phallus, etc.).

Based on our comparative iconographic study of Meshkin Shahr and Artsakh stelae which evidently indicates the Artsakh stelae more developed and, with this, chronologically being a little more late created circumstance, as a result of this study we suggest the hypothesis, that the first wave of Cimmerian-Scythian tribes in 8-7th centuries BC infiltrating the Iranian plateau, has also moved to the north, including Artsakh and disseminated the culture of anthropomorphic stelae.

ЕРАНЯН НЖДЕ АШОТОВИЧ

АНТРОПОМОРФНЫЕ ИЗВАЯНИЯ РАВНИННОГО АРЦАХА: ТОПОГРАФИЯ, ТИПОЛОГИЯ, ФУНКЦИЯ, ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЙ КОНТЕКСТ

РЕЗЮМЕ

Каменные антропоморфные изваяния появились в передней Азии и Евразийских степях начиная с 4-3 тысячелетий до н.э., и с большей интенсивностью распространились в 2-1 тысячелетиях до н.э. Данные изваяния встречаются как на территории северозападного Ирана (Мешкин Шахр), Средней Азии, Сибири, Европы, Сев. Кавказа, в Крыму и Северном Причерноморье, так и в Армянском нагорье (в Корчайк-Кордуке на территории Хакари), в нескольких памятниках Республики Армения (Мецамор, Шаваршаван, Мргаван, Аржис, Лори Берд, Джуджеван). По самой распространенной научной точке зрения, эти антропоморфные изваяния, с их многоликостью, являются различными проявлениями широкомасштабной и длительной культурной традиции. Армения отличается наличием многообразия материалов 2-1 тысячелетия до н.э. и можно предполагать,что одним из проявлений данного многообразия являются арцахские изваяния.

Физически для обследования было доступно 20 изваяний. Из фотографий и дневников исследователей мы получили информацию об еще двух памятниках. Двадцать два изваяния, которые мы обследовали, находятся на степной довольно

компактной территории Арцаха. Исследуемая территория находится на правом берегу реки Кур и занимает восточную часть Арцахской, а так же западную часть Мильской степей.

Данные изваяния были созданы с применением нескольких техник ваяния. С учетом всего этого все же можно утверждать, что описание ваяний строго схематическое,скупое, явно не было изображено много частей тела,хотя их "наличие" предполагаемо. Средства скульптуры так же сдержаны. Исследование памятников позволило зафиксировать то,что иконография нам представлена двумя комплексами а. телосложение б. одеяние (вкл. орудие и украшение).

На основе скромной техники ваяния, иконографического схематизма и «скупости» можем считать возможным, что Арцахские изваяния - это проявление широкого культурноисторического явления. С данной точки зрения особенно удивительна схожесть, которая присуствует между евразийской серией кимерских и древних скифских памятников. Мы считаем что это достаточная основа для предположения, что Арцахские каменные изваяния относятся к группе древних каменных изваяний, которые были распространены на большой территории. Как исследование близких параллелей, так и некоторые иконографические детали исследуемых изваяний и техника ваяния служат основой, чтобы датировать их в промежутке кон. 8-ого века – нач. 6-ого века до.н.э.

Изваяния найденные в Арцахе по всей вероятности служили надгробными плитами, и/или культовыми символами, которые ставили после смерти одного из членов коллектива. Они расположены на верхушке кургана, на грунтовых погребениях, посередине святыни на базе или без нее. Изваяния вероятно носят в себе понятия мироздания, изображая вертикальную ось (ось мира,всемирную колонну, древо, фалл, и т.д.)

В результате данного исследования предлагаем ту гипотезу, что Арцахские изваяния по хронологии и иконографии следуют за антропоморфными изваяниями Мешкин Шагра. Наверно еще первый поток кимеро-скифских племен 8-7 вв до н. э. проникая на иранскую долину отсюда позаимствовал и распространил к северу, в том числе и Арцах эту культуру.